

ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

27.05.2019

Հոլանդիայի 27-ին Չարենցավանի համայնքապետարանի նիստերի դահլիճում կայացավ ԽՄ ընդլայնված նիստ, որտեղ քննարկվեցին նախօրոք բարձրաձայնված և օրակարգում ընդգրկված մի շարք հարցեր: Նիստը վարում էր համայնքի ղեկավարի տեղակալ Վարդգես Չիլիսգարյանը:

Առաջին հարցը վերաբերում էր Չարենցավան քաղաքի մայթերի ծառերի համար նախատեսված դատարկ կտրվածքների /բաժակներ, թմբեր/ բարեկարգման, վերականգման և հաջորդաբար ծառատեսակներով լրացնելուն:

Համայնքի ղեկավարի տեղակալը նշեց, որ նման բնաբաժակներ կան հիմնականում Քոչարի փողոցում, ուստի այդտեղ կկատարվի ծառատունկ: ԽՄ անդամներին առաջարկեց որոշել, թե ինչպիսի ծառատեսակներ գեղեցիկ կլինեն այդ հատվածում:

Հաջորդ հարցով քննարկվեց գիշերային լուսավորություն ժամանակացույցի փոփոխությունը: Վարդգես Չիլիսգարյանը նշեց, որ էներգախնայող լամպերի տեղադրումը համայնքում ինքնին նշանակում էր լուսավորություն ժամերի երկարացում: Հոլանդիայի 1-ից լույսերը կվառվեն մինչև գիշերը 24:00-ին:

Մյուս հարցը վերաբերում էր համայնքի ամբողջ տարածքում աղբահանություն միասնական վճարի սահմանմանը: Վարդգես Չիլիսգարյանը նշեց, որ նման բան փաստացի հնարավոր չէ, քանի որ գյուղական բնակավայրերում աղբահանություն ծավալներն այլ են, քաղաքում այլ:

5-րդ հարցը վերաբերում էր Հրազդան-Չարենցավան ճանապարհի և Ֆանտան-Չարենցավան ճանապարհի հատման մասում ճանապարհային մեծ հայելի տեղադրելուն: Համայնքի ղեկավարի տեղակալը նշեց, որ այդ հարցով կդիմեն ճանապարհային ուստիկանությունը, պետք է հստակ հասկանալ ինչ ճանապարհային նշան է անհրաժեշտ այդտեղ տեղադրել:

6-րդ հարցով քննարկվեց քաղաքային զբոսայգու աղբահանության հարցը: Համայնքի ղեկավարի տեղակալը նշեց, որ քաղաքային զբոսայգու պայմանագրի կետերը թե՛ վարձակալը, թե՛ վարձատուներն տարբեր կերպ են մեկնաբանում, կետերից մեկն էլ հենց վերաբերում է աղբահանությանը: Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման հետ կապված համայնքապետարանը պատրաստվում է դիմել դատարան:

ԽՄ նիստի օրակարգի վերջին հարցով քննարկվեց համայնքի տարբեր հիմնարկների, դպրոցների, մանկապարտեզների տարածքում դենովա տիպի աղբամաններ տեղադրելու հարցը: Վարդգես Չիլիսգարյանը նշեց, որ նմանատիպ աղբամաններ յուրաքանչյուր տարի պատվիրվում են և տեղադրվում, սակայն կոտրվում են բնակիչների կողմից: Աշխատանքներ կտարվեն հնարավորության սահմաններում նոր աղբամաններ ձեռք բերելու համար: